



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտական թեման՝

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ

ՆԱԽԱԶԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՎՈՐԵԼ ՍՈՎՈՐԵԼՈՒ
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հետազոտող ուսուցիչ՝ Լիլյա Սերյոժայի Խաչատրյան

Արմավիրի N 4 ավագ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Նատալյա Վարդանյան

Արմավիր 2022

Բովանդակություն

Ներածություն.....	2
Թեմայի արդիականությունն ու խնդիրները.....	3
Գրականության ակնարկ	4
Մաս 1 .խնդրի էությունը,խնդրի վրա ազդող գործոնները	5
Մաս 2.....	6
Մաս 3.....	7
Մաս 4 /Սեփական փորձի նկարագրություն/.....	8
Մաս5 /ամփոփում/.....	13
Օգտագործված գրականության ցանկ.....	16

Ներածություն

Նախագծային մեթոդ, խնդրի (տեխնոլոգիաների) մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու **մեթոդ**, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով (պրոֆեսոր Եվ. Ս. Պոլատ): Այն սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնք իրականացվում են տրված առաջադրանքը կատարելու նպատակով՝ յուրաքանչյուր սովորողի համար էական և որոշակի վերջնական արդյունքի տեսքով: Նախագծային մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական խնդիրների կամ առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերել գիտելիքներ՝ տարբեր առարկաներից գիտելիքների ինտեգրման միջոցով: Նախագծային մեթոդը հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն է: Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Մանշանակում է, որ նախագծային մեթոդի հիմքում ընկած է սովորողի ճանաչողական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, տեղեկատվական

տարածքում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողության ձևավորումն ու զարգացումը:

Արդիականությունը կայանում է նրանում, որ

Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են մարդուց նոր մտածելակերպ. ընկալում, համագործակցային կարողություններ, նոր կոմպետենցիաներ, նոր դերեր, հմտություններ: Այս պայմաններում կարևոր է նախադպրոցական կրթության և հանրակրթության դերի վերախմաստավորումը : Այս մեթոդներից մեկը նախագծային տեխնոլոգիան է:

Մեծահասակների հետ համատեղ գործունեության ընթացքում երեխան ունակ է կատարել այնպիսի գործողություններ, որոնց ինքնուրույն կատարումը դեռևս անհնար է:

Խնդիրները

- ակտիվացնել իմացական հետաքրքրությունները՝ որոնողական և ստեղծագործական ինքնաարտահայտման միջոցով
- ձևավորել ժամանակակից տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու տարրական կարողություններ
- զարգացնել քննադատական մտածողություն և վերլուծելու ունակություններ
- զարգացնել կարողություններ մեծերի օգնությամբ, իսկ հետագայում նաև ինքնուրույն խնդրի լուծման հնարավոր մեթոդների բացահայտման համար
- զարգացնել երևակայություն և կոմունիկատիվ ունակություններ
- դաստիարակել հարգալից վերաբերմունք ընկերների և մեծահասակների հանդեպ և նրանց աշխարհայացքի նկատմամբ¹

¹ <https://elearning.amedu.am/course/info.php?id=498>

Գրականության ակնարկ

Այսօր նախագծային մեթոդը լայն տարածում է ստանում հանրակրթական ուսումնական գործընթացում,

որի միջոցով երեխաները ձեռք են բերում հետևյալ ունակությունները՝

- անձնական փորձի ձեռքբերում
- արդյունքի նախագծում, պլանավորում
- անհրաժեշտ ռեսուրսների հաշվարկում,
- որոշումների կայացում պատասխանատվության ստանձնում,
- կոմունիկատիվ հմտությունների ձեռքբերում:

Նախագծային մեթոդը հանդիսանում է հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մեթոդների համադրություն: Այստեղ ուսուցիչը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի, խորհրդատուի դեր: Նախագծային մեթոդը [մանկավարժության](#) մեջ նորույթ չէ: Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային, տեղական և հեռահաղորդակցական: ²

Երեխայի առաջին դպրոցը ընտանիքն է: Մանկավարժական մեծ պրակտիկա ունեցող մանկավարժ և գրող Անտոն Մակարենկոն իր մանկավարժական փորձի էությունը բնորոշել է՝ «որքան կարելի է մեծ պահանջկոտություն մարդու նկատմամբ և որքան կարելի է մեծ հարգանք նրա նկատմամբ» սկզբունքով: Մի պարտադրեք ձեր օգնությունը, բայց միշտ պատրաստ եղեք օգնել: Ծնողի օգնությունը չպետք է լինի պարտադրող, հոգնեցնող և ձանձրացնող: Երբեմն հարկավոր է երեխային հնարավորություն տալ ինքնուրույն հաղթահարել դժվարությունը, որպեսզի կարողանա էլ ավելի բարդ հարցեր լուծել: Միննույն ժամանակ պետք է հետևել, թե ինչպես է երեխան որևէ հարց լուծում, չի կարելի թույլ տալ, որ նա խճճվի և հիասթափվի: Երբեմն նույնիսկ անհրաժեշտ է, որ նա զգա ձեր զգոնությունը, ուշադրությունը և ձեր վստահությունը իր նկատմամբ: Մի վճարեք և մի պատժեք աշխատանքի արդյունքի համար: Ես խորհուրդ չեմ տալիս աշխատանքի մեջ խթանել կամ պատժել: Աշխատանքային խնդիրը և այն լուծելու ուղիները պետք է երեխային այնպիսի հաճույք պատճառեն, որ նա ուրախանա: Նրա համար նման պարգև կլինի, եթե նա ձեր հավանությունը ստանա իր հնարամտության և աշխատելու ձևի համար: ³

Ն ա խ ա գ ծ ա յ ի ն մ ե թ ո ղ ի տ ա ր ք ե ր ո թ յ ո ն ն ա յ լ մ ե թ ո ղ ն ե ր ի ց

Այս մեթոդով աշխատելու համար մանկավարժի հիմնական խնդիրներն են դառնում բացահայտել և

խթանել.

- անհատի առանձնահատկությունները,կարողությունները, գիտելիքների բազան
- երեխաների հետաքրքրությունների շրջանակը ,
- երեխաների գիտելիքների և կարողությունների պրակտիկ կիրառությունը, նախաձեռնողականությունը
- երեխաների գործունեության մաքսիմալ ինքնուրույնությունը և ստեղծագործական մոտեցումը
- ներարկել նպատակների և արժեքների հանդեպ ուժեղ հավատ և ջանք չինսայելու պատրաստակամություն՝
- իրենց վստահված նպատակների համար առաջադրանքները կատարելուն,
- համատեղ և թափանցիկ գործելակերպ, գործընթացի հանրային արդյունք(պրոդուկտ) և ներկայացում

Այսինքն այստեղ տեսական և գործնական գիտելիքները միասին կիրառելու և արդյունք ստանալու անհրաժեշտություն է առաջանում,ուր նաև պետք է ինտեգրել այլ առարկաներից ստացած գիտելիքների բազան:

Մանկավարժների համոզմամբ ծնողի պարտականությունն է քաջալերել երեխայի նախասիրությունները,հետաքրքրությունը ուսման նկատմամբ:Ներարկել երեխայի մեջ հարցեր տալու, վերլուծելու, պարզաբանումներ, ենթադրություններ, կռահումներ տալու կարևորությունը: Չվախենա

ինչ –որ մտքեր,գաղափարներ,լուծումներ առաջ քաշելուց : Այդ ամենը

արգասավոր հող է ստեղծում հետագա բեղմնավոր ,ստեղծագործ աշխատանքի համար:

2 <https://escs.am/files/files/2021-10-18/e2d8fba12e16f3699429e9bf678dd872.pdf>

3 https://shabat.am/am/article/107353/-_Yntaneakan-dastiarakutyanyan-10-oskya

Մաս 2.

✓ Ուսուցիչների խանդավառությունը և աշակերտների դասարանում սովորելու ներքին դրդապատճառը, կենսունակությունը փոխկապակցվածություն են: Ուսուցիչ-աշակերտ հաղորդակցության մշակույթը մեծ ազդեցություն է թողնում աշակերտի արժեքային համակարգի ձևավորման վրա: Ուսուցման ոլորտում առանցքային մեխը հանդիսանում է ուսուցիչը: Նրանից է կախված կրթության որակը և ստացված արդյունքը: Նա իր ինքնագարգացման ձգտումով, հոգեբանամանկավարժական առարկայական-մեթոդական կարողություններով /այսպես ասած՝ կոմպետենցիաներով/ կարող է ներգրավել աշակերտին ուսումնաճանաչողական ինքնուրույն գործունեության մեջ

¹ Բացի վերը նշած խնդիրների կարգավորումից, պետք է վերանայել նաև յուրաքանչյուր աշակերտի անհատական բնութագիրը և ադապտացնել խմբային աշխատանքի պայմաններին օր.՝

- Հետաքրքրասիրություն շրջապատի երևույթների, գիտատեխնիկական նորությունների նկատմամբ
- Սովորելու ձիրք
- Վճռականություն և հավատ սեփական կարողությունների նկատմամբ
- Աշխատասիրություն
- Սեփական անձի նկատմամբ պահանջկոտություն
- ՏՀՏ դարաշրջանի այս տեղատարափի տակ ինֆորմացիա վերցնելու, կիրառելու ճիշտ կողմնորոշվելու

Հմտություններ

Իր նորարարական գաղափարները կարողանա ներկայացնել լսարանի առջև որպես ստեղծագործություն, արտադրանք, արդյունք: Նախագծերի տեսակներից նշենք մի քանիսը.

1. Գործնականակողմնորոշիչ նախագիծ ,
2. Անհատական նախագիծ ,
3. Տեղեկատվական նախագիծ ,
4. Ստեղծագործական նախագիծ ,
5. Դերային նախագիծ և

Մաս 3.

Մարդկության համար ամենամեծ սպառնալիքը ուսման,ինքնակրթման,ինքնագարգացման նկատմամբ

անտարբերության ձևավորումն է :Ոսուցչի խնդիրն է նման վնասակար մտածելակերպը կամ մոտեցումը

արմատախիլ անել աշակերտի դեռ չկարծրացած հոգեբանությունից:

Արդի խնդիրները լուծելու համար անձը պետք է լինի բազմակողմանի զարգացած, ունենա գիտելիքների

լավ բազա:

Այդ պատճառով հաճախակի տարբեր առարկաներից ինտեգրված դասերը նպաստում են նոր մտքեր,նախագծեր ենթադրություններ,վարկածներ առաջ քաշելուն և իրագործելու համար քայլեր,ելք փնտրելուն:

Ժամանակակից քաղաքակրթությունը,զանազան կիրառական պահանջների բավարարման նպատակով ,

կյանքի է կոչում բազմաթիվ նախագծեր,որոնց ստեղծողները մի ժամանակ եղել են

աշակերտներ:

Այժմ մեր հետ,մեր կողքին նույնպես նրանք են.ապագա

գյուտարարները,ինժեներները,բժիշկները,ծրագրավորողները,

ուսուցիչները,որոնց պարտավոր ենք բացահայտել, մոտիվացնել ,ուղղորդել,խրախուսել,

վստահել և հավատալ,ստեղծել աշակերտների համար աշխատելու,ստեղծագործելու

պայմաններ ,միջավայր,բարոյահոգեբանական մթնոլորտ:

Նախագիծն իրականացնելիս մեր առջև արդեն դնում ենք ստորև նշված նպատակները.

- Սովորողների գործունեության միջոցով անհրաժեշտ հմտությունների և կարողությունների ձևավորում
- Սովորողների՝անհրաժեշտ տեղեկատվություն գտնելու,դիտելու, ուսումնասիրելու հմտությունների ձեռք բերելու,իրենց ձեռք բերած գիտելիքները օգտագործելու,ավելի լրացնելու և զարգացնելու իրական գործունեության միջոցով
- Փորձերի կատարման կամ դիտումների արդյունքում ստացված տվյալները գրանցելու, եզրակացություններ անելու նախնական կարողությունների ձևավորում
- Աշխարհաճանաչողության զարգացում
- ՏՀՏ -ների հետ աշխատելու հմտությունների ձևավորում
- Խմբով աշխատելու,միմյանց լսելու,հարգելու,հանդուրժելու կարողության զարգացում

▪ Աշխատանքային գործունեության արդյունքում ուսումնական այլ խնդիրների, մտահղացումների առաջընթացում, սեփական վարկածների բարձրաձայնում, ուսումնական նյութին վերաբերող սարքավորումների, ռեֆերատների, պրեզենտացիաների ստեղծում համագործակցային եղանակներով :

Մաս 4.

Մի փոքր կիսվեմ իմ իմ մի քանի փորձերով, իմ ներդրած աշխատանքներով, որոնցով հազեցած դասաժամերը ունեցել են լավ վերջնարդյունքներ :

✓ 10 բնագիտական հոսքում առաջարկեցի **տեղեկատվական նախագիծ՝**

ստեղծել WEB էջ <<Իմ դասարանը>> անվանումով: Այն պետք է արտացոլեր դասարանում կատարվող

իրադարձությունները, ձեռքբերումները, մասնակցությունները

գիտաժողովներին, սեմինարներին, վեբինարներին:

Կարճ ասած՝ պետք է արտացոլեր ուսումնական առօրյան:

Նախագծին ցանկություն հայտնեցին մասնակցել մի քանի աշակերտ: Իմ միջամտությամբ, բայց ոչ պահանջարկով բաժանվեցին դերերը:

Ձևակերպվեցին նպատակները և խնդիրները: Երկու աշակերտ պատրաստակամություն

հայտնեցին կառուցել էջը, իսկ մյուս երկուսը կատարել նյութերի մշակման, խմբագրման

աշխատանքները: Ես իրենց հետ զուգահեռ աշխատում էի, որպեսզի պատկերացնեին, թե ինչ արդյունք են ուզում ստանալ:

•

Ընտրվեց 11 ինֆորմատիկայի հումանիտար հոսքի համար նախատեսված դասագիրքը և իմ ձեռքի տակ եղած

HTML 4.0 մասնագիտական գիրքը Ա. Մատրոսովի, Ա. Սերգենի և Մ. Չաունինի հեղինակությամբ:

Աշխատանքն ընթանում էր համագործակցությամբ: Աշխատանքին զուգահեռ ընթանում էին

բուն քննարկումներ, վերլուծություններ: Նախագիծը կյանքի կոչվեց, բայց բնականաբար

ավարտական տեսք չունի, քանի որ աշակերտները դեռ երկու տարի պետք է սովորեն: Ժամանակի

ընթացքում էջը անընդհատ կհամալրվի

նոր նյութերով և թարմացված դիզայնով: Ներքևում ցուցադրված են այդ կայքերի տեսքը

սկզբնական շրջանում:

Facebook | Почта Mail.ru | Shtqերը


Файл | C:/Users/1/Downloads/ԱնիՎարդան10ըն.html

Google Карты | Авибилеты | Яндекс | Մտվ շերտավոր ք... | OK.RU | Новая вкладка | Միասնական և աս... | 10 ЛУЧШИХ Ф... | Mail.Ru: почта, пои... | Задачи на постоян...

Shtqերը

Էջի հեղինակներն են Անի Չակոբյան, Վարդան Գրիգորյան

Ռուսացուցիկի Լիլյա Խաչատրյան



Դասարան՝ 9-րդ...pptx

Введите здесь текст для поиска


26°C | 22:36 08.07.2022

Facebook | Почта Mail.ru | Lilya.html / Облако Mail.ru | ինֆորմատիկայի դաս Արմավի

Файл | C:/Users/1/Downloads/Lilya.html

Google Карты | Авибилеты | Яндекс | Մտվ շերտավոր ք... | OK.RU | Новая вкладка | Միասնական և աս... | 10 ЛУЧШИХ Ф... | Mail.Ru: почта, пои... | Задачи на постоян...

ռուսացուցիկ՝ Լիլյա Խաչատրյան



Չեռագոտական աշխատանքներին վերաբերող թեմաները ըստ հոսքային դասարանների

դասարաններ	հոսքը	թեմայի անվանումը
10դասարան	տնտեսագիտական	Իմարյւն ռեակտիվ շարժում Յիակոբսկու բանաձև Ֆիզիոլոգիական զանգվածով մարմնի շարժում ռեակտիվ ուժ
10	հումանիտար	Այիբներ ռեգրևանս սեյսմիկ այիբներ ձայնային այիբներ անորոշայն ենթաձայն
10	բնագիտական	Գիտաժողով թեմա՝ Ջուր Shtqերը պարո նախագիծ՝ կշակեռտական կայքի ստեղծում
Ելույթը պետք է ներառի հետևյալ կետերը՝ հատկությունները, նշանակությունը, բանաձևերը, պատմական տվյալները, կիրառությունները, առաջացած հետևանքները, արողթմերը, աշակերտի կողմից ներկայացված լուծումները, նախագծերը, փորձերի նկարագրերը, արդյունքների հասցեները		

file:///C:/Users/1/Downloads/ELEN ELLADA.html

Lilya (1).html | Lilya.html | ELEN ELLADA.html | Դասարան՝ 9-րդ...pptx

Введите здесь текст для поиска

26°C | 22:42 08.07.2022

Նախագծային աշխատանքի կազմակերպման քայլաշար

1. Նախագծային թեմայի ընտրություն
2. Թեմայի տրոհում ենթաթեմաների
3. Նախաձեռնող խմբերի ձևավորում
4. Տեղեկատվության հավաքագրում
5. Տեղեկատվությունների քննարկում, մշակում
6. Թեմայի վերաբերյալ եզրահանգումների ձևակերպում
7. Հետազոտական հաշվետվության նախապատրաստում
8. Նախագծի պաշտպանություն (պրեզենտացիա)
9. Արդյունքների ամփոփում⁴

Նախագծային դասի օրինակ

Գործնականակողմնորոշիչ նախագիծ (օրինակ՝ Ուսումնասօժանդակ նյութի ստեղծում)

✓ Այս նախագիծը գործնական և ստեղծագործական թեմատիկ նախագիծ էր, ուր պետք է ընդգրկվեր ողջ դասարանը:

Քայլերի հերթականությունը հետևյալ էր.

1. „Մոլեկուլային-Կինետիկ տեսության հիմունքները,, թեմայից ընտրեցինք ենթաթեմաներ՝
 - Դիֆուզիա
 - ագրեգատային վիճակներ
 - մթնոլորտային ճնշում
2. Քննարկվեց նրանց հանձնարարված առաջադրանքները, որոնք աշակերտները ինքնուրույն պետք է կատարեին:
3. Փոքր ուղղորդում արվեց:

² Հետազոտական նյութերը պատրաստելուց հետո ցուցադրվեց:

Հետազոտական աշխատանքների արդյունքները ամփոփվեցին ուսուցիչների ներկայությամբ :

Երեխաները արժանացան գովասանքի իրենց նախաձեռնությունների համար:

4. https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AE%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4

Պատրաստել էին ինքնաշեն սարքեր, տեսագրել էին իրենց իսկ կատարած փորձերը, որոնց համար որոշակի տնային պայմաններ էին պետք եկել, տեղում փորձեր կատարվեցին, ցուցադրեցին սահիկաշար/պրեզենտացիա/, որը հազեցած էր ուսուցանող նյութերով:

Դրանից հետո ծնվել էր մի նոր մտահղացում. որտեղ և ինչպես կիրառել: Առաջարկեցին մեխանիզմներ, որ շատրվանը լիցքավորվում էր առանց մարդու միջամտության/օր. ջրհորդանի տակ դնելով անձրևի ժամանակ, լծակի միջոցով շրջվեր ու լիցքավորվեր, ապա աշխատեր այդ ընթացքում/, առաջարկվեց ջրել փոքրիկ ծաղկանոցներ և այլն...



10-դասարանի Յայկն Է:Իր պատրաստած շատրվանի աշխատանքի սկզբունքը բացատրում է՝ հիմնվելով մթնոլորտային ճնշման թեմայից ունեցած իր



Նույն դասարանի Ռաբարան տարբեր եղանակներով փորձում էր նույն թերի սպրեզառայ ին վիճակների մացումները ստանալ :

Այսպիսով ստանում էր սրիեստական անձրև:

Այնուամենայնիվ սառը, հեղուկ վիճակում գտնվող ջուրը վայրկյանների ընթացքում վերածում է սառույցի. այս փորձերի մասին ստեղծագործությունը ունենում է փաստել և գտել էր

Ինքնուրույն: Դրոշ այս մասեր փոփոխելով ստացել էր որոշակի պոռն ու նքներ, որոնք պոժանացան իրավուն սանքի:

❖ Ստեղծագործական մոտեցման մեկ այլ դրսևորում նկատվեց մեկ դասարանում, ուր սովորում էին

Ֆուտբոլասեր տղաներ: Հանձնարարվեց կառուցել ֆուտբոլի դաշտի մակետ/մոդել/, որի համար պահանջվում էր ինքնուրույն դիզայներական մոտեցում, լուսավորություն.

Դասը էլեկտրականություն բաժնից „էլեկտրական շղթաներ,, թեման էր: Տղաները լուսադիտողային էկրան էին պատրաստել, որը տարբեր գույներով թվերն էր ցուցադրում: Դաշտի սահմանները լուսավորել էին փոքրիկ լամպերով: Շատ հաջողված աշխատանք էր հետաքրքիր լուծումներով: Դասարանում տղաներից մի քանիսը խանդավառված ստեղծեցին իրենց նախագծած մոդելները: Աշխատանքը ստացված էր այնքանով, որ իրատեսական դարձավ երեխաների մոտիվացումը նախագծային աշխատանքներին, ընկերոջ հաջողված փորձը ոգևորության աղբյուր դարձավ մյուսների համար, հավատ ներշնչեց իրենց ուժերի նկատմամբ, ինչպես նաև մրցակցային մթնոլորտ ծնեց, որը շատ խրախուսելի էր: Այսպես կարելի է շատ օրինակներ թվարկել:

Ամփոփում

❖ /Վերլուծականություն./

Որքան շատ ներգրավենք աշակերտներին,վստահենք նրանց,թողնենք ինքնուրույն որոշումներ կայացնեն,այնքան մեծ արդյունքներ կարող ենք ակնկալել:Մակայն նրանց պետք է վերահսկողությունից չհանել,համապատասխան պահին հասնել օգնության մեր խորհուրդներով,ինտերակտիվ նյութերով,փորձով,վարպետությամբ:Երբեք պետք չէ աշխատանքը կիսատ

թողնել,ինչ որ պահի թույլ տալ,որ առանց արդյունքը տեսնելու հրաժարվեն.Դա կբերի նրան,որ իրենց համար լուսաբանված չի դառնա վերջաբանը,աշխատանքի ընթացքում առաջացած հարցերը,լուծման ճիշտ ուղիները:Պետք է փուլ առ փուլ վերանայել,ոգևորել,այլապես հնարավոր է լինեն հիասթափություններ:Պետք է հարկ եղած դեպքում օգնության ուղարկել ջանասեր և գիտակ ընկերոջ:Համագործակցությունը ունի շատ դրական հետևանքներ:Իրարից սովորելով,իրար օգնելով ավելի լավ վերջնարդյունք կարելի է ակնկալել:

Կարելի է գրականություն նշել,որից կվերցնեն անհրաժեշտ գիտելիքներ իրենց բացը լրացնելու համար:

Այսինքն նախագծային աշխատանքները նպաստում են սովորել սովորելուն,պրպտել ,գտնել ճիշտ լուծումներ,սովորել լսել,ընկալել ,կիրառել ուսումնական նյութեր,խորհուրդներ,կատարել փորձի փոխանակում,հմտանալ ,մասնագիտանալ,դառնալ վարպետ որևէ բնագավառում:Այլ կերպ ասած հասունանալ և կայանալ ...

❖ /Հետագա անելիքների ուղենշում/

Մոլորակի վրա կան այլ կարևոր հարցեր,որոնք պատասխան են պահանջում,և կարիք կլինի նոր սերնդի,

որը հետաքրքրված ու ջատագով կլինի և գլուխ կհանի գիտությունից:

ԻՆչպե՞ս ենք կերակրելու անընդհատ աճող բնակչությանը.

Ո՞նց ենք մաքուր ջուր մատակարարելու.

Ստեղծելու վերականգնվող էներգիա.

Կանխարգելելու և բուժելու հիվանդություններ.

Դանդաղեցնելու գլոբալ կլիմայական փոփոխության ընթացքը:



Հուսով եմ, որ գիտությունն ու տեխնոլոգիան կտրամադրեն այդ հարցերի

պատասխանները, սակայն գիտակ

և հասկացող մարդիկ պետք կլինեն՝ այդ լուծումներն իրագործելու համար:

Եկեք պայքարենք յուրաքանչյուր կնոջ, յուրաքանչյուր տղամարդու՝

առողջ, ապահով, հնարավորություններով

և սիրով լի կյանք ունենալու առիթը բաց չթողնելու համար:

Մենք բոլորս ժամանակի ճամփորդներ ենք, միասին ուղևորվում ենք դեպի Ապագա:

Եկեք միասին աշխատենք՝ այդ Ապագան դարձնելով այցելության համար ցանկալի վայր:

Շղեք խիզախ, եղեք հետաքրքրասեր, եղեք վճռական, հաղթահարեք դժվարությունները:

Ամեն ինչ հնարավոր է:^{5 3}

Այսպիսով ուսուցչի առաքելությունն է իր փորձառությամբ, գիտելիքներով, մեթոդներով

ձևավորել հասարակության համար մեծ ներուժ ունեցող մրցունակ անհատներ, որոնք դպրոցից

վերցրած տեսական գիտելիքները և հմտությունները կարողանան օգտագործել գործնական

կյանքում՝ բիզնես գործունեության,

շահութաբեր արտադրության, մեծ կազմակերպություններում աշխատելու տարբեր

հաղորդակցական հարաբերությունների մեջ/ընկերական, պաշտոնական կայլն/:

Այսինքն՝

- մարդու մոտ մոտիվացիա առաջացնի ինքնուրույն գտնել տեղեկատվությունը եւ օգտագործել այն,
- պատրաստ լինել արագ ընթացող փոփոխություններին,
- շուտ կողմնորոշվել, ադապտացվել իրավիճակին,
- ինքնուրույն գտնել ելքեր, լուծումներ
- Երբեք չդադարել սովորել :
- Սովորելով և սովորեցնելով հաղթահարի իր առջև առաջացած խոչընդոտները

Լավ է կույր աչոք, քան կույր մտոք: ԵՂԻՇԵ

Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչ գիտես: ԱԴՈԼՖ ԴԻՍՏԵՐՎԻԳ

...

Առանց ցանկության սովորող աշակերտը նման է թևեր չունեցող թռչունի: ՄԱԱԴԻ

...

Երեխայի ուսուցման նպատակն է նրան ընդունակ դարձնել հետագայում զարգանալու առանց ուսուցչի օգնության: ԷԼԲԵՐԹ ՀԱԲԱՐԴ

...

Ով ոչ մի բան չի հարցնում, նա ոչ մի բան չի սովորի: ԹՈՄԱՍ ՖՈԻԼԼԵՐ

...

Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգագործել աշխարհը փոխելու համար: ՆԵԼՍՈՆ ՄԱՆԴԵԼԱ



1. <https://elearning.amedu.am/course/info.php?id=498> ,
2. <https://escs.am/files/files/2021-10-18/e2d8fba12e16f3699429e9bf678dd872.pdf>
3. <https://shabat.am/am/article/107353/-Yntaneakan-dastiarakutyam-10-oskya>
4. https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AE%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B4%D5%A5%D5%A9%D5%B8%D5%A4

5 „Համառոտ պատասխաններ` կարևոր հարցերին,,հեղինակ Սթիվեն Հոփինգ

,